

ՆՇՄԱՐ

ՅԱՆՉՆԱՌՈՒ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԻ ԿԵՑՈՒԱԾՔ

Բոլոր անոնք, որոնք կարդացին համբավա-
ւոր արուեստագետ Արսինե Խանճեանի Երեւա-
նի մէջ ունեցած նորագոյն արտայայտութիւն-
ները («Ազդակ» լոյս ընծայած էր երկուշաբթի,
3 օգոստոսին), վստահաբար ապրեցան յուզու-
մի պահ մը եւ մղումը ունեցան երիտասար-
դուհին ճակատը համբուրելու:

Շարժապատկերի ծանօթ փառատօսի ծի-
րին մէջ Յայաստան իր այցելութեան առիթով,
Արսինե յստակ կեցուածքներով մատը դրած էր
քանի մը վերքի վրայ: Օրինակի համար, ան
ձաղկած էր երկերեսանի այն կացութիւնը, որ
կը տիրէ Յայաստան-Թուրքիա սահմանի բաց-
գոց խաղին դիտանկիւնէն: Անոր ամենէն դի-
պլոմ ու քաջ արտայայտութիւնը այն էր, որ Ար-
ցախ իր առաջին այցելութենէն ետք, զգացած
է, որ հոն ազատագրական պայքարի յիշա-
տակները տակաւին չերմ են, հոն թափուած
արիւնը «դէռ թարմ է»...: Ան նաեւ տեղին նկա-
տողութիւններ կատարած էր Յայաստանի մէջ
բարձրացող գունաւոր շէնքերուն մասին, մատ-
նանշելով, թէ անոնցմով չէ որ Յայաստան պի-
տի ներկայանայ քաղաքակիրթ աշխարհին:
Վերջապէս, վերադառնալով իր ընդգրկած աս-
պարեզին ոլորտը, ան սրտցաւորէն մատնա-
նշած էր Ցեղասպանութիւնը շարժանկարի ար-
ւեստի ճամբով աշխարհին ծանօթացնելու եւ
այս ուժեղ գէնքը ի նպաստ մեր Դատին գոր-
ծածելու ուղին (ան արդեօք ծանօթ է այն աղ-
բին, որ հայկական պատկերասփիւռի կարգ մը
կայաններ կը հրամցնեն զբաղիլ ցանկացող
հանդիսատեսին...):

Արսինեի այս սրտցաւ արտայայտութիւննե-
րուն բաժնեկից է հայութիւնը, Յայաստանի դի-
մագրաւած դժուարութիւններով տագնապող-
ները: Մատնանշումները խորքին մէջ նորու-
թիւն չեն, սակայն ուշագրաւն ու ողջունելի
այն է, որ այս արտայայտութեանց հեղինակը
արուեստագետ մըն է, որ ահա կը ցուցաբերէ
յանձնառու կեցուածք, հեռու՝ կրաւորակնու-
թենէ, որով կը փորձեն շղարշուիլ կարգ մը ար-
ւեստագետներ, պատճառաբանելով, որ նման
հարցեր հեռու են, հեռու պէտք է պահուին ար-
ւեստի աշխարհէն, արուեստագետներ պէտք
է խուսափին քաղաքական կեցուածքներ ար-
տայայտելէ եւ այլն:

Նման յանձնառու կեցուածքներու շատ չենք
հանդիպիր մեր անդաստաններուն մէջ: Երա-
նի թէ նման ձայներ կրկնուին, բազմաան ու
ազդեցութիւն բանեցնեն մեր հաւաքական
կեանքին վրայ՝ մեր հայրենիքին ու արտերկ-
րի քաղաքական, ընկերային, մշակութային ու

ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿ
ՅԱԿՈՒ ՍԱՀԱԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մահուան քառասունքին առիթով

Չանագան գաղութներու կրթական
օճախներու մէջ ծառայած Յակոբ Սահակ-
եան իր աչքերը փակեց Յալէպի մէջ, ուր
ապրեցաւ կեանքի վերջին քսանամեակը:

Քեսապի բարձունքին, Էքիզօլուզ գիւ-
ղին մէջ իր հօրենական երգիքին տակ
ծնած էր 1936-ին: Նախակրթութիւնը ստա-
ցած էր տեղւոյն Ազգ. Ուսումնասիրաց
վարժարանին մէջ, ապա՝ Յալէպի նորա-
հաստատ Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանի
մէջ, իբրեւ գիշերօթիկ աշակերտ, որուն
շրջանաւարտներու հինգերորդ հունձքին
մաս կազմելով՝ աւարտած էր 1957-ին:

Ընդառաջելով իր հօր փափաքին՝ վերա-
դարձած էր հայրենի գիւղ եւ 1957-1958
տարեշրջանին դասաւանդած է տեղւոյն
Ազգ. Ուսումնասիրաց միացեալ վարժա-
րանին մէջ:

Ուսուցչական ասպարեզը ընդունելով եւ
ընդառաջելով պատկան մարմիններու
հրահանգին՝ ան իբրեւ հայրենաւանդ ու-
սուցիչ յաջորդաբար պաշտօնավարած էր
Գամիշլիի (1958-1959), Լաթաքիոյ (1959-
1960) եւ Յոմսի մէջ (1960-1961):

1961-ին, քաղաքական պայմաններու
բերումով, կը հաստատուի Պէյրութ եւ կը
զբաղի դերձակութեամբ, հանրածանօթ
վարպետի մը մօտ:

Դերձակատան յաճախորդներէն՝ բազմա-
վաստակ հասարակական գործիչ եւ Ազգ.
Զարէն Եփփէ ճեմարանի հիմնադիրներէն
Յրջ Փափագեան, երբ կը հանդիպէ երիտա-
սարդ ուսուցիչ Յակոբին այլ ասպարեզի մը
մէջ, իր վրդովումը կը յայտնէ եւ կը դասաւո-
րէ, որ ան յաջորդ տարեշրջանին պաշտօ-
նավարէ Պուրճ Յամուտի Ս. Զառասնից
Մանկանց վարժարանին մէջ:

Վերադառնալով կրթական ասպարեզ՝
Յակոբ 1962-1966 կը հաստատուի Պուրճ
Յամուտ, ապա Յունաստան՝ Աթէնքի Ազգ.
Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան վարժարան՝
1966-1970, 1970-1972 տարեշրջաններուն՝
Թրիփոլի եւ 1972-1973 տարեշրջանին՝ Ժի-
պէյլի «Թռչնոց Բոյն»-ին մէջ:

1973-ին կը հրաւիրուի Զուէյթի Ազգ.
վարժարան, ուր կը մնայ մինչեւ 1980:

Ուսուցչական ասպարեզին առընթեր, իր
ապրած գաղութներուն մէջ ընկ. Յակոբ Սա-
հակեանի շունչին տակ դաստիարակուած
են մատղաշ ու պատանի սերունդներ:

1980-ին կը վերադառնայ Քեսապ եւ այս
անգամ կը զբաղի հողամշակութեամբ, Տիւզ
Աղաճի շրջանին մէջ, ուր տարիներու
ընթացքին իր տնկած խնձորենիները կա-



Յալէպի Նոր Գիւղի հայաշատ թաղամասը:

1993-ին կը կոչուի Ս. Զառասնից Ման-
կանց Մայր Եկեղեցւոյ քարտուղարութեան
պաշտօնին:

2009-ի Ս. Ծննդեան ճրագալոյցի առա-
ւօտուն, եկեղեցւոյ ելեկտրական շարժա-
կին բանեցման պահուն, աչ ձեռքը արկա-
ծի մը հանդիպելով՝ կը կորսնցնէ ցուցա-
մատը եւ կ'անշարժանան միջնեմատն ու
մատնեմատը:

Կեանքի վերջին 6 ամիսները այս արկա-
ծին պատճառով կը պարտաւորուի մնալ
տունը, առողջական վիճակը կը վատթա-
րանայ եւ կը մահանայ 1 յուլիս 2009-ին:

Յակոբ Սահակեան 1992-1997 տարինե-
րուն մաս կազմեց նաեւ Յալէպի «Գանձասար»
շաբաթաթերթի անձնակազմին՝ իբրեւ լեզուա-
կան սրբագրիչ: Իսկ մինչեւ իր մահուան տա-
րին՝ ան սիրալոյս կերպով ստանձնած էր
նոյն թերթին Նոր Տարուան հաստափոր բա-
ցառիկ թիւերուն սրբագրութիւնը:

Տխուր է անդրադառնալ սակայն, թէ իր
մահուան առթիւ զարմանալիօրէն, ամենա-
դոյզն արձագանգ մը անգամ չէր ելցաւ
նոյն թերթին սիւնակներուն մէջ...

1964-ին կը կազմէ իր ընտանեկան բոյ-
նը Էօժէի Պալճեանի հետ եւ կ'ունենան
երկու մանչեր՝ Յրաչ (ի յիշատակ Յրաչ Փա-

օրինակելի եւ շնորհալի հայորդիներ:

Յրաչը ծանօթ է իր թարգմանչական վաս-
տակով, հեղինակ է քանի մը գիրքերու եւ
անդամ է Սուրիոյ արաբ գրողներու միու-
թեան: Ան հիմնադիր տնօրէնն է նաեւ
«Ազատ Յայ» կայքէջին:

Իր մահէն 4-5 օր առաջ հեռաձայնեց, հո-
գին կը խայտար հայրական ուրախու-
թեամբ: Կ'իմացներ, թէ Յրաչը Երեւանի մէջ
կատարած է Յայաստանի Յանրապետու-
թեան քաղաքացիի երդումը:

Յակոբ Սահակեանին առաջին անգամ
հանդիպողը կը նկատուի անոր մաքրակոն
հայու նկարագիրը:

Սխալներու եւ անհանդուրժելի արարք-
ներու նկատմամբ չէր տատամներ իր խի-
զախ տեսակետը յայտնելու, առանց հաշ-
ի առնելու սխալողին հանգամանքը կամ
պաշտօնը, յաճախ երգիծական ոճով կը
յանդիմաներ, եւ ընդհանրապէս իր առօր-
եային մէջ ան զուարթախօս ու հաճելի
զրուցակից մըն էր:

Գաղափարական իր համոզումները ան-
շեղ էին եւ սկզբունքային, իսկ հայ գիրի եւ
մշակոյթի իբրեւ ծառայ՝ ան կը վրդովէր
իմացական արժեքներու գահավիժումին եւ
անկումին ի տես:

Իր դագաղին շուրջ բոլորուած հարա-
գատներուն, գաղափարի ընկերներուն եւ
բարեկամներուն մէջ նկատելի էր բազմա-
վաստակ ուսուցիչին աշակերտներուն բա-
ցալայութիւնը, իր ծառայած շրջաններուն
աշխարհագրական հեռաւորութեան պատ-
ճառով: Սակայն նախախնամութեան դա-
սաւորումով, իր յուղարկաւորութեան արա-
րողութեան ինքնակոչ կերպով կը հանդի-
սապետէր Գամիշլիի իր աշակերտներէն,
այժմու Բերիոյ թեմի առաջնորդի օգնական
Վահան Ծ. վրդ. Պերպերեանը:

Գերեզմանատան մէջ գաղափարի իր ըն-
կերներուն կողմէ սրտի խօսք արտասանեց
Սմբատ Գրիգորեան, եւ անոր մարմինը հո-
ղին յանձնուեցաւ «Վերքերով լի» երգով:

Յակոբ Սահակեանի մահով մեզմէ ան-
դարձ կը մեկնի Ազգ. Զարէն Եփփէ ճեմա-
րանի առաջին սերունդներու ներկայացու-
ցիչներէն մեկն ալ, որ աշակերտած է հիմ-
նադիր՝ երջանկայիշատակ Չարեհ Ա. կա-
թողիկոսին, տնօրէն Մինաս Թօլէտօլեանին,
Արեգ Տիրագանին, Արմէն Անոյշին եւ այլ
հեղինակաւոր ուսուցիչներու:

Տեղին է յուշել Ազգ. Զարէն Եփփէ ճե-
մարանի Շրջանաւարտից միութեան պա-
տասխանատուներուն, թէ նման պարագա-

այլ ոլորտներուն վրայ: Ի վերջոյ, արուեստագետ կը նշանակէ նաեւ մտաւորական խմորում, ու մտաւորականը, ինչպէս է պարագան այս արուեստագետին, չի կրնար անտարբեր մնալ մեր երկիրն ու ժողովուրդը տագնապեցնող հարցերուն, տագնապներուն ու մարտահրաւերներուն դիմաց:

Ս. Մ.

ՀԱՐԱ-Ի ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ՎԵՐԱՈՐԱԿԱԴՐՄԱՆ ԵՒ ՎԿԱՅԵԱԼ ԿԱՐԳԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ



Կազմակերպութեամբ ՀԱՐԱ-Ի Կեդրոնական վարչութեան եւ մասնակցութեամբ ՀԱՐԱ Լիբանանի, Սուրիոյ, Իրաքի, Զուէյթի եւ ՀԱՍԿ-ի խմբապետներուն, Հալէպի մէջ, 22-26 յուլիս 2009-ին, տեղի ունեցաւ խմբապետներու վերաորակաւորման ու վկայեալ կարգի Միջին Արեւելքի գործնական դասընթացը:

Այս ծրագիրին Լիբանանէն իրենց մասնակցութիւնը բերին ՀԱՐԱ Պուրճ Յամուտի եւ Այնճարի մասնաճիւղերէն 11 անդամներ: Մասնակցողներուն ընդհանուր թիւն էր 24:

Շար.ը՝ էջ 8

րօտ էին իր մնայուն խնամքին:

1989-ին վերջնականապէս կը հաստատուի իր երբեմնի կրթարանին՝ Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանի շրջանին մէջ,

փագեանի) եւ Վիգէն:

Պարագաներու բերումով ընտանիքը յաճախ ապրած է հայրական հոգածութենէ հեռու, սակայն իր զաւակները եղած են

ներուն հետաքրքրուին երեք շրջանաւարտներով եւ արժանին հատուցեն անոնց:

Հալէպ

Ս. Է.

«ԶՀԱՑ ՄԵՐ ՀԱՆԱՊԱԳՈՐԴ...»

Հրամանաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ, 2008-ին կաթողիկոսարանի կրթական-հայագիտական բաժանմունքի գրասենեակը լոյս ընծայեց Անթիլիասի տպարանէն «**Չհաց մեր հանապազորդ...**» խորագրեալ հատորը, մեկենասութեամբ «Գալուստ Կիլիպէնկեան» հիմնարկութեան եւ խմբագրութեամբ բանաստեղծ Սարգիս Կիրակոսեանի:

«**Երթը պիտի շարունակուի**» խորագրեալ իր յառաջաբանին մէջ խմբագիրը կ'ըսէ, թէ Արամ Ա. վեհափառ հայրապետը Հայ գիրքի 29-րդ ցուցահանդէսին բացման օրը թելադրեց կաթողիկոսարանի կրթական-հայագիտական բաժանմունքի գրասենեակին, որ հրատարակէ հայկական վարժարաններ յաճախող աշակերտներուն կողմէ հայ լեզուի մասին գրուած շարադրական փորձերը:

Կրթական այս նախաձեռնութիւնը իրագործելու առաջադրութեամբ, Հայագիտական բաժանմունքի գրասենեակը պաշտօնական հաղորդագրութեամբ դիմեց ոչ միայն լիբանանահայ վարժարաններու, այլ նաեւ՝ սփիւռքահայ միջնակարգ ու երկրորդական տարբեր վարժարաններու տնօրէններուն, որ իրենց աշակերտներուն կողմէ հայ լեզուի եւ հայ գիրքի մասին գրուած լաւագոյն գրութիւնները ուղարկեն Անթիլիաս: Յիշեալ վարժարանները ճշդուած ժամկետին կը դրկեն խնդրոյ առարկայ յօդուածները կրթական-հայագիտական բաժանմունքի գրասենեակը: Այսպէս, շնորհիւ սփիւռքահայ ուսուցիչներու սերտ գործակցութեան, հատոր մը լեցնելու չափ ձեռագիր գրութիւններ կը հասնին Անթիլիաս, ուր խմբագիր Սարգիս Կիրակոսեան կը համարէ, կը կազմէ եւ ապա կը յանձնէ զանոնք հրատարակութեան: Այս պայմաններուն տակ ծնունդ կ'առնէ «**Չհաց մեր հանապազորդ...**» հատորը, որ կը բաղկանայ 212 էջերէ եւ կ'ընդգրկէ հետեւեալ ութ երկիրները. Լիբանան, Սուրիա, Զուէյթ, Իրան, Թուրքիա, Ամերիկա, Յունաստան եւ Ֆրանսա:

Արդարեւ, հատորին առաջին բաժինը յատկացուած է լիբանանահայ գաղութին, որ կը հաշուէ իր մէջ պատկառելի թիւով հայկական միջնակարգ ու երկրորդական վարժարաններ: Հայոց լեզուի եւ հայ գիրքի մասին 67 լիբանանահայ աշակերտներ կ'արտայայտեն իրենց զգացումները՝ արձակ եւ չափածոյ գրութիւններով: Յօդուածագիրները առհասարակ կը շեշտեն հայ գիրքին կարեւորութիւնը մեր ազգային իրականութեան մէջ՝ ընդգծելով այն իրողութիւնը, թէ հայերէն գիրք մը փճացնելով՝ թրքաբարոյ արարք մը կատարած կ'ըլլանք: Կ'ըսեն, թէ շնորհիւ հայ գիրքու գիւտին՝ մենք ազգովին հայացանք: Թէ՛ մեր գոյութեան հիմնասիւնն է հայ լեզուն, որ դարձաւ դարերէ ի վեր գաղթաշխարհի հայութեան հոգեկան հայրենիքը եւ անոր իմացական անկորնչելի միջնաբերդը: Յօդուածագիրները կ'ըսեն նաեւ, թէ մեր թարգմանիչ վարդապետները հայերէնի թարգմանեցին Աստուածաշունչ Մատեանը: Թէ՛ մենք մեր գրականութիւնը կը պարտինք հորեւնացիին եւ Կողբացիին, Կորիւնի եւ Փարկեցիին, Շիրակացիին եւ Շնորհալիին, Նարեկացիին եւ Տաթևացիին, որոնց գրութիւնները «**անսպառ հարստութիւն**» են եւ «**զանձ անապական**»:

Հատորին երկրորդ բաժինը կը գրաւեն յօդուածները սուրիահայ 12 աշակերտներու, որոնք կը փոխանցեն այն մտածումը, թէ հայ ժողովուրդը իր գոյութիւնը կը պարտի հայոց լեզուին: Անոնք կը թելադրեն, որ ճիշդ խօսիլը՝ օգտուելով հայ լեզուի հարուստ բառամթերքէն եւ թոյլ չտանք, որ օտար բառեր մուտք գործեն մեր խօսակցական լեզուին մէջ:

Հատորին յաջորդ բաժինով կը ներկայանան երկու հայ աշակերտներ, որոնք կը յաճախեն Զուէյթի Ազգային վարժարանը: Անոնք կ'ըսեն, թէ շնորհիւ Ս. Մեսրոպ Մաշտոցիին՝ ունեցանք գիր,

գրականութիւն եւ մշակոյթ: Թէ՛ հայոց լեզուն կը պատկանի աշխարհի հնագոյն լեզուներու շարքին եւ, այս հանգամանքով, կը յատկանշուի իր հարուստ բառապաշարով եւ քերականական շքեղ կառոյցով:

Հատորին յաջորդ բաժինը յատկացուած է իրանահայ գաղութին, ուր 25 հայ աշակերտներ չափածոյ եւ արձակ գրութիւններով կը հիւսեն գովքը Ս. Մեսրոպ Մաշտոցիին, Սահակ Պարթեւ կաթողիկոսին, Վռամշապուհ արքային եւ թարգմանիչ վարդապետներուն, որոնց շնորհիւ ունեցանք հայերէն Սուրբ գիրք, ունեցանք գրականութիւն եւ մշակոյթ:

23 պոլսահայ աշակերտներ, որոնք կը մասնակցին հայոց լեզուի նուիրուած հրատարակութեան, կը գնահատեն անփոխարինելի արժեքը Ս. Մեսրոպ Մաշտոցիին, որուն շնորհիւ ունեցանք լեզու եւ ազգային գրականութիւն:

Ամերիկահայ 21 աշակերտներ, որոնք չափածոյ եւ արձակ գրութիւններով կ'ուխտեն պահպանել հայոց լեզուն եւ կառչած մնալ մեր ցեղային արմատներուն: Այս առնչութեամբ, որքան դիպուկ են հայ լեզուին նուիրուած հետեւեալ տողերը, որոնք կը պատկանին Ազգ. Ֆերահեան երկրորդական վարժարան յաճախող ամերիկահայ Աբօ Կարապետեանին:

**Ծառերը կը շարժին, տերեւները կը թափին,
Բայց ծառին արմատը կը մնայ:
Հողերդ կը գրաւուին, ընտանիքդ կը սպաննուի,
Բայց քու լեզուդ կը մնայ:**

Հատորին վերջին բաժինը յատկացուած է յունահայ եւ ֆրանսահայ 6 աշակերտներու, որոնց գլխաւոր մտահոգութիւնը կը հանդիսանայ հայապահպանման հարցը: Այս առումով, անոնք կը կատարեն մեր ազգային կեանքին մէջ առանցքային նշանակութիւն ունեցող հետեւեալ երեք թելադրանքները. պահպանել մայրենի լեզուն, զօրավիգ կանգնիլ Հայց. Ս. Եկեղեցւոյ՝ իբրեւ լուսեղէն ակունքը մեր հաւատքին եւ սերտել հայոց պատմութիւնը, որ իր պատմական բազում իրադարձութիւններով կը կամրջէ մեր անցեալն ու ներկան՝ ապագայի հեռայայտ ոլորտներուն...

Պէտք է ըսել, որ կաթողիկոսարանի կրթական-հայագիտական բաժանմունքի պատասխանատուները կատարած են յարմար ընտրութիւն՝ հայոց լեզուի եւ հայ գիրքի նուիրուած վերոյիշեալ հատորը կոչելով «**Չհաց մեր հանապազորդ...**» խորագրով: Այսպէս, ինչպէս հացը մեր առօրեայ կեանքին մէջ ունի կենսական նշանակութիւն, նոյն հանգիտութեամբ, հայ լեզուն եւս մեր հոգեմտաւոր կեանքին կենսանիւթն է, առանց որուն՝ չենք կրնար ապրիլ եւ գոյատեւել:

Արդարեւ, գնահատելի իրագործում մըն է «**Չհաց մեր հանապազորդ**» խորագրեալ հրատարակութիւնը, զոր Սարգիս Կիրակոսեան խմբագրած է ճաշակով եւ բժախնդրութեամբ:

Հետեւաբար կը թելադրենք, որ գաղթաշխարհի հայկական վարժարաններու աշակերտները ճաշակեն սոյն հատորը՝ իբրեւ իրենց իմացական կեանքի հանապազօրեայ սնունդը եւ զայն բաշխեն նուիրական մասունքի պէս իրենց մօտիկ եւ հեռաւոր սերնդակից բարեկամներուն...

Մայիս 2009
Պէրյուք

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ